

ՀՏԴ՝ 811.19

ԶԵՂՉՈՒՄԸ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԵՔ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Գուրգեն Խաչատրյան

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական համալսարան

Բանալի բառեր՝ զեղչում, նախադասության անդամ, նախադասության հարակից անդամ, նույնական և ոչ նույնական, լրիվ զեղչում, մասնակի զեղչում, գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն:

Խնդրո առարկա թեման ցայսօր համակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել, սակայն մի շարք աշխատություններում տեղ են գտել գրաբարին, միջին և նոր գրական հայերեններին վերաբերող քննություններ ու դիտարկումներ¹: Այս հոդվածում համադրության, համեմատության և նկարագրական մեթոդներով ուսումնասիրվում են զեղչման հիմնական դրսևորումները գրական հայերենի զարգացման բոլոր փուլերում՝ գրաբարում, միջին գրական հայերենում և նոր

¹ Կարապետյան Լ.Լ., Հովսեփյան Լ.Ս. և ուրիշներ, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 143-148, 190: Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն. Ա. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 445-458: Իշխանյան Ռ.Ա., Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 269-299: Գյուլբուրդյան Ս. Վ., Ժամանակակից հայոց լեզու, Պարզ նախադասություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1988, էջ 236-241: Աբրահամյան Ս. Գ., Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., «Լույս» հրատ., 2004, էջ 51-55: Խաչատրյան Գ.Կ., Շահվերդյան Թ.Ս. և ուրիշներ, Գրական հայերենի պատմության դասընթաց, հ. Բ, Շարահյուսություն, Եր., «Արման Ասմանգուլյան» հրատ., 2018, էջ 172-179, որտեղ տողերիս հեղինակն անդրադարձել է գրաբարի, միջին գրական հայերենի և արևելահայերենի՝ խնդրո առարկա իրողություններին:

գրական հայերենի երկու ճյուղերում՝ արևելահայերենում ու արևմտահայերենում²:

Նախաբան. Զեղչումը քերականական այն իրողությունն է, որի կիրառմամբ ձևավորվում են արտահայտության պլանում ոչ ամբողջական (թերի), իսկ բովանդակության պլանում ամբողջական նախադասություններ: Զեղչմամբ կատարվում են ոչ միայն ժամանակի, մարդկային ջանքի, նյութի և այլ տնտեսումներ, այլև կարելի է հետապնդել խոսքի ոճավորման նպատակ:

Զեղչումը բնորոշ է գրական հայերենի երեք շրջաններին, որտեղ զեղչվում են թե՛ ամբողջական նախադասություններ, թե՛ նախադասությունների առանձին հատվածներ, թե՛ գլխավոր ու երկրորդական անդամներ և վերջիններիս բաղադրիչներ, թե՛ նախադասության հարակից անդամներ, անգամ՝ որոշ հնչյուններ: Նախադասություններն ու նրա առանձին հատվածները (երկանդամ և բազմանդամ բառակապակցություններ և այլն) սովորաբար զեղչվում են բարդ կառույցների կազմում: Նախադասության բուն և հարակից անդամները կարող են զեղչվել թե՛ պարզ նախադասություններում, թե՛ բարդ կառույցներում: Հնչյունների զեղչումը կատարվում է նախադասության բուն և հարակից անդամների կազմում: Ասվածը նշանակում է՝ բարդ նախադասություններն այն կառույցներն են, որոնցում կարող է ի հայտ գալ զեղչման համալիր պատկերը:

Զեղչում կարող է կատարվել բոլոր այն դեպքերում, երբ վերոնշյալ միավորները շարահյուսական միևնույն կամ տարբեր գործառույթներով բառային արտահայտություն ունեն *նույն, նախորդ կամ հաջորդ որևէ նախադասության կազմում*³, իսկ եթե անգամ բառային արտահայտություն չունեն, ապա խոսքային տվյալ իրադրության բովանդակության պլանում ենթադրվում են: Այսպես՝ միջինհայերենյան «Ժողովեցան դատաւորքն...: Եւ ի վերայ այսր բանին խորհուրդ առին եւ քննութեամբ այդպէս հաստատեցին ի մէջ կնոջ եւ ի մէջ զաւակաց ողորմած հոգուն» (Կ-Պ) կից կառույցներից առաջինի բառային-քերականական

² Առաջիկա շարադրանքում զեղչված լեզվական միավորները բերվում են ուղղանկյուն փակագծերում:

³ Երբեմն զեղչված միավոր(ներ)ը և վերջին(ներ)իս՝ խոսքի նախորդ հատվածում քերականական արտահայտություն ունեցող համարժեք(ներ)ը կարող են միմյանցից ընդմիջարկված լինել մեկ կամ մի քանի անկախ նախադասություններով, որոնք խոսքում ներդրյալ շարահյուսական միավորների տպավորություն են ստեղծում: Օրինակ՝ Ամենքն ալ տարեց էին: Երկրաբանական հին շրջաններուն կազմված կարգով քարայրներեն մեկուն առաջքը տարածած էին օթոցները, ու ծալլապատիկ, շուրջանակի նստած էին: *Հաճի Ներսէս աղան առտուն կանուխ ծառան դրկա ծ, կարգադրություններ ընել տված էր: Իր ու գյուղին աղաներուն արբանյակը՝ երկայն Այիքսանն ալ խոհարար կարգած էր: Բեմկիներու ու հունապենիներու մացառուտքին մոտ օճախները շինած էին անոնք, ու սաներուն մեջ կերակուրները կեփէին: Մուխերը քարայրներեն վեր կբարձրանային ու, ուղղություննին փոխելով, գետին դեմի ափի այգիներուն վրա կտատանէին:* Օղիով սկսան (ՄԼՁ):

արտահայտություն ունեցող ենթական [*դատատրքն*] հաջորդ բարդ կառույցի երկու նախադասություններում զեղչվել է ենթադրվելու պատճառով: Մինչդեռ «Տեսայ իմ հոգոյս հոգին՝ Ջարդարած ու բաղնելուայ» (Հ) նախադասության մեջ ենթական բառային արտահայտություն չունի, բայց այդ նախադասության, մասնավորապես ստորոգյալի (*տեսայ*) արտահայտության և բովանդակության պլաններից էլնելով՝ այն կարելի է վերականգնել [*ես*]:

Գրական հայերենի բոլոր շրջաններում առավել հաճախ զեղչվում են նախադասության անդամները, մասնավորապես՝ գլխավորները: Նմանատիպ կառույցներում, զեղչված անդամ(ներ)ին զուգահեռ, հաճախ հանդես են գալիս ընդհանուր անդամներ⁴: Ընդհանուր և զեղչված անդամները կարող են ունենալ բառային-քերականական միևնույն կամ տարբեր արտահայտությունները և հանդես գալ միևնույն կամ տարբեր շարահյուսական գործառույթներով: Ըստ այդմ՝ ընդհանուր և զեղչված անդամները՝

1. նույնական են, երբ նույն կամ տարբեր կառույցներում և՛ իմաստային պլանում են նույնը (ցույց են տալիս նույն առարկան), և՛ ունեն խոսքիմասային պատկանելության, ձևաբանական արտահայտության ու շարահյուսական գործառույթի նույնություն: Այսպես՝ միջինհայերենյան «Իմ եարն ինձի դեմ դիպաւ, Գլխարկովըն զիս ծածկեց» (Հ) բարդ կառույցի առաջին նախադասության *իմ եարն* և երկրորդ նախադասության զեղչված անդամները [*իմ եարն*] նույնական են, քանի որ երկուսն էլ արտահայտված են նույն խոսքի մասերի, համապատասխանաբար, սեռական և ուղղական հոլովներով (կատարում են, համապատասխանաբար, հատկացուցչի ու ենթակայի շարահյուսական գործառույթ):

2. Ոչ նույնական են, երբ նույն կամ տարբեր կառույցներում իմաստով նույն են, խոսքիմասային պատկանելությամբ կարող են լինել նույնը կամ տարբեր, իսկ ձևաբանորեն և շարահյուսական գործառույթով տարբեր են: Այսպես՝ միջինհայերենյան «Նախ՝ հաստատեցին ի մեջ զաւակաց այսպէս. Որ էլնեն ի այդ տանէն եւ ի բաց կենան իւրեանց մօրու մօտէն» (Կ-Պ) բարդ կառույցի ընդհանուր անդամի (*ի մեջ զաւակաց*) և երկրորդ նախադասության զեղչված անդամի [*զաւակք*] կապը ոչ նույնական է. թեև այդ կապն առկա է շնորհիվ ընդհանուր անդամի (*զաւակ*), սակայն վերջինս տարբեր նախադասություններում ունի ձևաբանական և շարահյուսական տարբեր լուծումներ (համապատասխանաբար, սեռական հոլովով կապվող բառ և ուղղական հոլովով ենթակա):

Ոչ նույնական հարաբերության մեջ են նաև միևնույն նախադասության կազմում առկա՝ բառային-քերականական արտահայտություն ունեցող, և զեղչված անդամները, որոնք տարբեր են թե՛ խոսքիմասային պատկանելությամբ, թե՛

⁴ Տե՛ս Աբրահամյան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 253:

ձևաբանորեն (արտահայտության պլանով) և թե՛ շարահյուսական գործառույթով: Նրանք ունեն միայն քերականական կարգերի նույնություն: Այսպես՝ միջինհայերենյան «Իմ սիրտս է պատառ մի միս, Քն սիրուն ինչպե՞ս դիմանամ» (Հ) կառույցի երկրորդ նախադասության առկա ստորոցայի (*դիմանամ*) և զեղչված ենթակայի [*էս*] միջև գոյություն ունի ոչ նույնական հարաբերություն, քանի որ՝ ա) արտահայտված են տարբեր խոսքի մասերով, բ) մեկը բայի թեք ձևով է արտահայտված, իսկ մյուսը՝ գոյականի ուղղական հոլովով, գ) մեկը ստորոցայի գործառույթ ունի, մյուսը՝ ենթակայի, դ) և միայն դեմքի ու թվի քերականական կարգերն են նույնը:

Ջեղչված միավոր(ներ)ի և դրանց՝ խոսքի նախորդ կամ հաջորդ հատվածում քերականական արտահայտություն ունեցող (կամ չունեցող) համարժեք(ներ)ի ուսումնասիրությունից պարզվում է, որ բովանդակության պլանում դրանց միջև առկա է թվային համապատասխանություն⁵. Եզակի թվով զեղչված անդամին համապատասխանում է եզակի համարժեք անդամ (առկա կամ զեղչված), իսկ հոգնակի թվով զեղչված անդամին՝ հոգնակի կամ մեկից ավելի համարժեք անդամներ (առկա կամ զեղչված): Այսպես՝ արևմտահայերեն

«–Կերևա թե՛ *կովուն* ցավերը շատցան, – ըսավ կեսուրը, հարսին հասակին նայելով, – մինչև իրիկուն կըլլա որ՝ [կովը] կծնի» (ՄՆՁ) կառույցի [կովը] զեղչված անդամին համապատասխանում է *կովուն* առկա անդամը: «– Խաթումամ, *Խորո աղբարս* Սերոյենց կալին տակը ճնճուկ բռնել գնաց,– ըսավ աղջնակը: –Ալ ի՞նչ հոգ ունինք որ,– հարեց պառավը,– [Խորոյին] ոտքերը չարոխ չկա, ... [Խորո] հիմա ալ ելեր՝ ճնճուկ բռնել կերթա...» (ՄՆՁ) կառույցի [Խորոյին]/[Խորո] զեղչված անդամին համապատասխանում է *Խորո* առկա անդամը: «Ու չգիտես՝ զայրանում է [*հին որսորդը*], թե ժպտում հին որսորդը...» (ԱԲ) կառույցի [*հին որսորդը*] զեղչված անդամներին համապատասխանում են [հին որսորդը] առկա անդամները: «[դու] Ինչո՞ւ [իմ] քովս եկար, կուզե՞ս, որ մեկը վրա գա, քեզ տեսնեն ու [մենք//ես և դու] ամենուն բերանը ինկնանք» (ՄՆՁ) կառույցի [մենք//ես և դու] զեղչված անդամին համապատասխանում են [դու] և [իմ] զեղչված համարժեք անդամները, ինչպես հետևյալ կառույցում՝ [ես] զեղչված և *քեզ հետ* առկա համարժեք անդամները՝ «... [ես] քեզ հետ եմ, [մենք//ես և դու] ջերմում ու մրսում ենք» (ՊՍ) և այլն:

Գրական հայերենի երեք փուլերում զեղչման հետևանքով առաջանում են կազմությամբ թերի, բովանդակությամբ ամբողջական նախադասություններ, որոնք, ըստ գործածության, լինում են *անկախ* կամ *կախյալ*:

⁵ Նշված *համապատասխանությունն* էապես տարբերվում է *թվի քերականական կարգով տեղի ունեցող համաձայնությունից*.

1. Անկախ են կառուցվածքով պարզ և ինքնուրույն գործածություն ունեցող թերի նախադասությունները: Օրինակներ՝

Գրաբարից՝ Ահա [էս] նշանագրեցի յայսմ ելթն յեղանակիս (ԵՂ): Ունէին [նոքա] եւ զանթիւ կարասի զանձուցն առաջի թագաւորին (ՓԲ):

Միջին հայերենից՝ Տարին տասներկու ամիս [ես] Կու տապիմ ի մեջ զնտանիս (Հ): Այսպէս [ես] ճանչցա Ալբանիան (ԱՍ):

Արևելահայերենից՝ Ու Կարինէ Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով՝ [ես] Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով (ԵՉ): Քեզ այս ձևով ունենալու-չունենալու պատճառով [ես] Կորցրել եմ ունեցածս՝ հպարտությունս հաղթողի (ՊՍ):

Արևմտահայերենից՝ Այո՛ ըսել կուզեր [հարսը] (ՄՆՁ): Նախ [մենք] բան մը ունինք ճշտելիք (ՏՉ): [ես] Այնքա՛ն կփափագեի տեսնել անգամ մը քաղցր ու հանդարտ ծովակը (ՏՉ): [ես] Կգարմանամ քեզի (ԼՇ):⁶

2. Կախյալ թերի նախադասությունները հանդես են գալիս բարդ նախադասությունների կազմում, ինչպես նաև երկխոսություններում: Օրինակներ՝

Գրաբարից՝ Իբրեւ [Զրուան] ծնաւ զմես եւս որդի, [նա] անուանեաց զնա Որմիզդ. [նա] եհան զթագաւորութիւն յԱրհմնէ (ԵՂ): Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ [ցՎասակ] եւ ասէ [Շապուհ ցնա]. Աղէ՛՛ [դու] տուր ինձ զիտել... (ՓԲ):

Միջին հայերենից՝ «...եթէ զառաջնորդն մեր հայիոյեցին նոքա՛ կունդ եւ քաչալ անուն տային [նոքա նմա], [դու] հարկ եւ խարած դիր ի վերայ քրիստոնէից, զի [նոքա] ուրանան զՅիսուս եւ [նոքա] դարձցին յանօրէն օրէնքս մեր» (ԹՄ): Եկաւ Աննա Խաղունն. որ կոչի Յեօլպէին Մխիթարին որդուն կողակիցին. եւ եբեր [Աննա Խաղունն] զիւր կտակն. որ գրել էր [նա] իւր յօժար կաման (Կ-Պ):

Արևելահայերենից՝ [ես] Քեզ հետ եմ. [մենք] ջերմում [ենք] ու մրսում ենք (ՊՍ): Որբացած հոգիս ողջունում է քեզ, Դյութական ձայնով [որբացած հոգիս] կանչում է [քեզ] հանդես (ՀԹ):

Արևմտահայերենից՝ Յերեկ մը ջաղացքը ադոն չկար, աշնանավերջի արևին մեջ, մինակը, դուռը նստեր էր, կռնակը պատին տվեր [էջ]՝ կմրափեր (ՄՆՁ): Փոքրիկը ուղղեց, ըսավ թե՛ այս գիշեր պիտի չդառնա իր հայրիկը, հոն պիտի պառկի [իր հայրիկը] (ՄՆՁ): Չէ՞ որ բնութենէն հեզ է քու հոգիդ և սիրտդ բարի [է] (ԼՇ):

⁶ Արևմտահայերենից քաղված օրինակները բերում ենք՝ պահպանելով բնագրերի ուղղագրությունը:

Գրական հայերենի երեք փուլերում ն՛ նախադասությունների, ն՛ նախադասության անդամների ու հարակից միավորների կազմում կատարվել և կատարվում է՝ ա) *լրիվ* կամ բ) *մասնակի* զեղչում⁷:

1. Լրիվ կարող են զեղչվել, օրինակ, երկխոսություններում պարտադիր բաղադրիչ համարվող գերադաս նախադասությունները՝ հեղինակային խոսքերը: Օրինակներ՝

Արևելահայերենից՝

— Դո՛ւ էիր հանցավորը, Գո՛՛ն, ինչպե՛ս կարողացար լույ ենթադրության վրա հիմնված, թագուհու ներկայությամբ ասել, թե կաթողիկոսը փախչում է Այրիվանքից ... [,- ասաց մայրը որդուն]:

— Ենթադրության վրա չէի հիմնված, մայրի՛կ, այլ իսկության, - ընդհատեց Գոռը ... (Մ):

Արևմտահայերենից՝

— Ինչո՞ւ աքլորը վար ձգեցիր,- պոռաց Մխսին՝ ձեռքը ոտքը դող ելած:

— Ինչո՞ւ պատիս վրա կթառի [- հարցուց Մնուշ Մխսիին]:

— Պիտի թառի [- պատասխանեց Մխսին Մնուշին] (ՀԱՄ):

Լրիվ զեղչվում են նաև բարդ կառույցով արտահայտված մեջբերվող ուղղակի խոսքի գլխավոր կամ երկրորդական նախադասությունները⁸:

Օրինակներ՝

Արևելահայերենից՝

— Ինչո՞ւ ես շտապում:

— [Շտապում եմ,] Որպեսզի ժամանակին տուն հասնեմ⁹:

Արևմտահայերենից՝

— Ինչո՞ւ չմնացիր Հայաստանում:

— [Զմնացիմք Հայաստան, որովհետև] Համայնավարները չենք սիրեր (ՎՇ):

— Քանի՞ օր մնալու էք Թիֆլիս:

— Չեմ գիտեր (ՎՇ):

2. Նախադասությունների մասնակի զեղչման դեպքում բառային արտահայտություն չունեն մեկ կամ մի քանի բուն կամ հարակից անդամներ: Մասնակի զեղչում կարող է կատարվել ն՛ պարզ, ն՛ բարդ նախադասություններում, այդ թվում՝ երկխոսություններում, ինչպես՝

—

⁷ *Լրիվ զեղչում* և *մասնակի զեղչում* տերմինների մասին տե՛ս **Գարապետյան Լ.Լ., Հովսեփյան Լ.Ս. և ուրիշներ**, նշվ. աշխ., էջ 145:

⁸ Հմմտ. **Աբրահամյան Ս. Գ.**, էջ 54:

⁹ Այլ մոտեցմամբ սա կարելի է համարել բարդ ստորադասական կառույցի մասնակի զեղչում:

- [ես] Ենթադրության վրա չէի հիմնված, մայրի՛կ, այլ [ես] իսկության [վրա էի հիմնված], - ընդհատեց Գոռը [մոր խոսքը]:
- [դու] Իսկության՞ն [վրա էիր հիմնված]. ինչպե՞ս [էիր դու իսկության վրա հիմնված]:
- Այո՛, ճշմարտությունը ես ծածկեցի թագուհուց, որովհետև [ես] չէի կամենում անհանգստացնել նրան:
- Ի՞նչ ճշմարտություն [դու ծածկեցիր թագուհուց]:
- Այն [ճշմարտությունը ես ծածկեցի թագուհուց], որ շուտով մեր լեռների վրա հարձակում կլինի.... (Մ):

Նախադասության անդամների մասնակի զեղչումը տեսականորեն կարող է վերաբերել նախադասությունից փոքր՝ պարզ, բաղադրյալ կամ վերլուծական կազմությամբ շարահյուսական միավորներին, որոնցից են երկանդամ կամ բազմանդամ կապակցությունները, պարզ և բաղադրյալ ենթակաները, ստորոգյալներն ու խնդիրները, վերլուծական կազմությամբ պարզ ստորոգյալները, օժանդակ բայերը, ինչպես նաև հարակից անդամներ: Ահավասիկ մասնակի զեղչման օրինակներ՝

Գրաբարից՝ Վասն այնորիկ ոչ կամի կեալ եւ *[ոչ կամի]* զլոյս տեսանել (ԱԳ): գոր ի հնոց ժամանակաց հետէ առ ձեզ Արշակունիս *վաստակեալ եմք, եւ եղեալ [եմք]*¹⁰ զանձինս մեր ի վերայ ձեր (ՓԲ):

Միջին հայերենից՝ Չգիտեմ՝ վարդէ՞ դ առնեմ, Թ՛ *[թէ]* ռահնէդ, ուր հոտն է անուշ (Հ): Յանկարծ, որ երկուք լինէր՝ Նայ *հան՛ի [հանէի]* զմէկիկն ու *մորթ՛ի [մորթէի]* (Հ): Մահալօքս ի վար *կուզի [կու գայի]* (Հ) և այլն:

Արևելահայերենից՝ Նայում ես և չես կարողանում որոշել՝ ձեր է Ավին, թե դեռ երիտասարդ գուցե մարդ չէ, այլ խրտվիլակ *[է]* (ԱԲ): Ու չգիտես՝ զայրանում է, թե ժպտում *[է]* հին որսորդը ... (ԱԲ): Օգտատերերի մի մասը բողոքում է սոցցանցերի դանդաղ ներբեռնելուց, *[օգտատերերի]* մի մասը՝ նամակներ ուղարկելու ժամանակ առաջ եկող խնդիրներից, *[օգտատերերի]* մի մասն էլ չի կարողանում տեսանյութերը դիտել (ՀՏ):

Արևմտահայերենից՝ Լըճա՛կ, դու ես թագուհիս, Ձի թ՛ *[թէ]* հովէ մ՛ալ խորշումիս, Դարձյալ խորքիդ մեջ խրոռով Ձ՛իս կը պահես դողողալով (ՊԴ): Հետեւյալ առտուն կառքը երկու կիները Պաղչեճիկեն իջեցուցեր *[էր]*, ծովեզերքը բերեր

¹⁰ Ընդգծված տիպի կառույցների հետագա զեղչումից ձևավորվել են ընդհանուր օժանդակ բայով *յաւղեալ եւ ուսեալդ ես* (ԱԳ), *միամտեալ եւ հաւանեալ եւ նուաճեալ էին* (ԱԳ), *գնեալ եւ զգուշացեալ լինի* (ԱԳ) և նմանատիպ կառույցներ, որոնցից *եւ-ի* (ապա նաև *ու-ի*) զեղչման հետևանքով հենց 5-րդ և հետագա դարերում սկսել են կազմվել առավել սերտ կապակցություններ՝ զուգաբայեր՝ *անցեալ եկեալ լինէր* (ԱԳ), *զարմացեալ զարմացեալ եւ*, եւ կարի քաջ (ԱԳ), *դիմեալ եկեալ էր* (ԱԳ), *անկեալ ելեալ էին* (ԱԳ) և այլն:

ձգեր էր (ԳԶ): Ժայռ մ' [ւը] ալ հեռուն, մութին մեջեն կարծես թե Հի՛ն կրոնքի դի-
ցուհի մ' [ւը] է սրբանվեր (ԱՍ):

Շարահյուսական միավորները սովորաբար զեղչվում են հիշատակված լինելու դեպքում (ավելի հաճախ հիշատակվում են զեղչումից առաջ, երբեմն՝ հե-
տո), սակայն որոշ միավորներ կարող են զեղչվել նաև առանց նախապես կամ
հետագայում հիշատակված լինելու: Այսպես՝

1. Ենթական կարող է զեղչվել լրիվ կամ մասնակիորեն:

1.1. Ենթական կարող է լրիվ զեղչվել թե՛ նախապես կամ հետո հիշատակ-
ված լինելու դեպքում, թե՛ առանց հիշատակված լինելու:

1.1.1. Առաջին դեմքի ենթակաները կարող են զեղչվել թե՛ առանց նախա-
պես կամ հետագայում հիշատակված լինելու, թե՛ նախապես կամ հետագայում
հիշատակված լինելով: Օրինակներ՝

Գրաբարով՝ Սորա լինին որդիք երեք եւ դուստր մի, որպէս [եւ] ասացի
(ՄԽ): Արդ էս արկից գբեզ ի տանջանս եւ [եւ] եդից դանդանաւանդ ի կզակս քո
(ԱԳ):

Միջին հայերենով՝ Թէ [մենք] ապրինք՝ [մենք] հետրաց ապրինք, Թէ
[մենք] մեռնինք՝ սերն այլ հերիք է (Հ): Եւ էս գնացի նարա մոտն եւ [եւ] սկսայ
ասել նմա. թէ ինչ ճուաբ տաս (Կ-Պ):

Արևելահայերենով՝ [մենք] Պարենք մեր անձկացած ու նեղացած հոգում,
Ինչ ուզում է լինի՝ հերն անիծած (ՊՍ): Նանի՛, ներքում էս մարդիկ տեսա, [եւ]
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում... (ՀԹ):

Արևմտահայերենով՝ – «[մենք] Խըմե՛նք, – ըսավ, – ու տոնենք Արշակունի
գահերուն Թավալումներն անդունդի և մեղկանքի մեջ փըցուն» (ԴՎ): Ես կհա-
մակվեի, [եւ] կհափշտակվեի միշտ ալ զգացական այդ դրվագներեն (ՄՆԶ):

1.1.2. Երկրորդ դեմքի ենթակաները նույնպես կարող են զեղչվել և՛ առանց
նախապես կամ հետագայում հիշատակված լինելու, և՛ նախապես կամ հետա-
գայում հիշատակված լինելով: Օրինակներ՝

Գրաբարով՝ Եւ ասեր. «Ա՛յ, [դուք] մի՛ լինիք տիրասպանուք» (ՓԲ): Զի դու
միայն կալոց եւ [դու] մնալոց ես յաւիտեան (ԱԳ):

Միջին հայերենով՝ [դու] Ի Վարագ ի յուխտ կերթաս, Զան առջի ծնրիկն,
որ [դու] դնես, Թող քեզի դարիմ լինի, Թէ [դու] չասես՝ գով որ [դու] կու սիրես (ՀԾ):
[դու] Եդիք հետեւող իմաստութեան հետ. Եթէ [դու] չուսանիս՝ [դու] բժիշկ ես ան-
գէտ. Լինիս յուզ գիտուն, [դու] արա՛ բանիս պէտ. Գրոցն անունն է՝ Անգէտի ան-
պէտ (ԱԱ):

Արևելահայերենով՝ [դու] Գերել ես հայացքով քո անեզր և [դու] կապել
քո սիրո հմայքին (Դ): - Քու կենտրոնում փոստը յուս ստացել ես և [դու] տեսել, որ
մենք դատարանից նամակ ունենք (ՀՄ):

Արևմտահայերենով՝ Օ՛, [դուք] չի սուկաք, երբ անպատմելի պատմությունս ձեզի պատմեմ...(Ս): - [դուն] Ինչո՞ւ քովս եկար (ՄՆՁ): Ե, հիմա հավատա՞մ, թե *դուն* վար չիջար, [դուն] չգացիր մոտը (ՄՆՁ):

Նշված ենթականերն առավել հաճախ գեղջվում են երկրորդ դեմքի ստորոգյալով ուղղակի խոսքերում, մասնավորապես՝ կոչականի առկայության դեպքում¹¹: Օրինակներ՝

Գրաբարով՝ «Ո՛վ Սողոն, Սողոն, [դու] գեղեցիկս բարբառեցար, ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչեւ ի վախճան» (ՄԽ): Տէ՛ր, [դու] լուր աղօթից իմոց (ՍԳ):

Միջին հայերենով՝ – Աղջի՛կ, աղբօրտ արևուն, [դու] Նօշըպէն պտիկ մի ջուր տուր (Հ): Լացաւ ու լալով ըսաւ, – Եա՛ր, [դու] զիս խաղք արիր ցորեկով (Հ)¹²:

Արևելահայերենով՝ – Օ՛, Սուլամի՛թա, [դու] բա՛ց արա դուռդ (ՊՍ): – Քամինե՛ր, [դուք] իջեք, Մազերս [դուք] պոկեք, Ա՛խ, էլ մազերս գուրգուրող չունիմ (ՀԾ):

Արևմտահայերենով՝ Է՛հ, [դուք] մնա՛ք բարով, աստվա՛ծ և արև՛, Որ կ՛պլպլաք իմ գլխույս վերև (ՊԴ): – Օղո՛ւլ,- ըսավ անոր,- Էֆենտիիդ տղան կսիրե կոր քեզի, [դուն] ա՛լ ի՞նչ կ՛ուզես (ԳՁ): — [դուն] Ալութային գոմը ավըլեցի՞ր,— խոսեցավ կեսուրը դադարե մը հետո,— [դուն] մաքիներուն առաջքը ցախ դրի՞ր, որ ուտեն (ՄՆՁ): - Աղջի, օտար տան ցախավել, [դուն] ըսե թե այս գիշեր պիտի չգա,— հծծեց հարսը իր աղջկանը ,- [դուն] խո՞ւլ ես, ինչ ես (ՄՆՁ): - [դուք] Պիտի մսիք,- կրկնեցի,- [դուք] շատ անզգույշ եք, օրիորդ Իոմա (ԱՍ):

1.1.3. Երրորդ դեմքի ենթական սովորաբար գեղջվում է նախապես հիշատակված լինելու դեպքում: Ընդ որում, այն կարող է հիշատակված լինել նույնականորեն (միևնույն խոսքի մասով, միևնույն քերականական ձևով և շարահյուսական միևնույն գործառույթով) կամ ոչ նույնականորեն: Հմմտ. հետևյալ երկուական օրինակները՝

Գրաբարով՝ « զքեզ կալցին *քաջք*, տարցին [*քաջք*] յԱզատն ի վեր ի Մասիս » (ՄԽ) և Եւ *ղթագաւորն Վարազդատ* հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց. չոգաւ գնաց [*ղթագաւորն Վարազդատ*] ի յերկիրն Յունաց. անդ եկաց [*ղթագաւորն Վարազդատ*] որչափ եւ եկեաց, եւ անդէն մեռաւ [*ղթագաւորն Վարազդատ*] (ՓԲ):

Միջին հայերենով՝ Իմ *եարն* է քարամ արել Ու [*Իմ եարն*] խրկել զմեզ հարցուցել (152) և Եւ տանի ողորմած հոգուն ստացուածոց *տղոց* պաշար, որ [*տղաքն*] առանձին իւրեանց խարճ առնեն (ԿՊ):

¹¹ Այս փաստը լավագույնս վկայում է ուղղակիորեն մեջբերվող գրավոր և բանավոր խոսքերի սերտ կապի մասին (հմմտ. **Գարայետյան Լ. Լ., Հովսեփյան Լ.Ս. և ուրիշներ**, նշվ. աշխ. էջ 145):

Արևելահայերենով՝ *Ոստ ու ճյուղերը* փակում են ճամփադ, Իսկ մթնշաղին կամ աղջամուղջին [*ոստ ու ճյուղերը*] ճանկառում են դեմքդ, [*ոստ ու ճյուղերը*] Աչքիդ սպառնում (ՊՍ) և Զարհուրանքով կարելի է նայել *նրան*, երբ [*նա*] փողոցի անցուդարձ անողներից պահված, մի անկյունում քաշված, սրանրա համար տրեխ է գործում (ԱԲ):

Արևմտահայերենով՝ Ու խելացնոր այս խեղճ կինը բոլոր սրտերը գոց գտաւ, [կինը] Իր Աստուծմէն յոյսը կտրեց եւ [*կինը*] մտածեց թշնամիէն պաղատիլ գայն... [*կինը*] Գնաց անոնց ոտքերն ինկաւ եւ [*կինը*] սուրերնին համբուրեց ... (Ս) և Երբոր վերջին ճախրին մեջ Տրդատ բըռնեց [*Նազենիկի*] բագուկեն Եվ ծունկին վրա նըստեցուց [*Նազենիկը*] (ԴՎ)¹³:

Նշեցինք, որ զեղչված անդամը կարող է բառային-քերականական արտահայտություն ունենալ խոսքի կա՛մ նախորդ հատվածում, ինչը սովորական է համարվում, կա՛մ հետագա, ինչը ոչ միշտ է պատահում: Ահա 3-րդ դեմքով ենթակայի՝ խոսքի առաջին, ոչ թե երկրորդ հատվածում զեղչման օրինակներ գրական հայերենի տարբեր փուլերից՝ Եւ իբրեւ եկն թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց, սա եթող զկինն իւր եւ փախեաւ: Ապա տարան [*Պարսիկքն*] զՀամագասպուհի յերկիրն Տոսպայ, ի քաղաքն ի Վան, հանեալ կախեցին զնա *Պարսիկքն* զբարձր աշտարակացն (ՓԲ): Մակար զինքն ընդ յինք թողում, Որ երի [*կաշիս*] և սևնա կաշիս (Հ): Ու չգիտես՝ զայրանում է [*հին որսորդը*], թե ժպտում հին որսորդը ... (ԱԲ): [*Սոնան*] Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության ատվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում (ԱԲ): Թուրթրուն ծառերը թոթվելու չէին սպասեր: [*թուրթեր*] Կհասուննային, կթափեին գետին: Նոր *թուրթեր* կբուսնեին (ՄՆԶ): Երբեմն տունը կը գտնվեր [*Մարտիրոս*] ու մոռցված հանձնարարություն մը լսելու համար Մարտիրոս մինչև հանըմին երանավետ սենյակը կ'ելլեր (ԳԶ):

1.2. Ենթական կարող է զեղչվել նաև մասնակիորեն, եթե կազմությամբ բաղադրյալ է և հաջորդում է նախօրոք հիշատակված բաղադրյալ ենթակայի՝ *Վեցն ի նոցունց* շարժեն զաչսն, և երեքն [*ի նոցունց*] ժողովեն զբարակ ջլացն զտակսն¹⁴: Հավաքվածներից ոմանք ցուցադրաբար պատռել և գետին են նետել

¹³ Չեղչված ենթակայով նախադասությունների հետ չպետք է շփոթել միակազմ նախադասությունները, որոնց ենթական **խոսքի ո՛չ նախորդ հատվածում է հիշատակվում, ո՛չ էլ հաջորդ: Օրինակներ միջին հայերենից** և արևմտահայերենից՝ Եւ թէ յիմար լինի [բժիշկն]՝ նա լաւն այն է, որ չի տանին առ հիւանդն, եւ ոչ զնա բժիշկ համարին (ԱԱ): Միսերուն տաք ու ախորժաբեր շոգին բարձրացավ ամաններէն: Վարդանին ախորժակը գրգռվեցավ, ու սպասեց, որ աման մըն ալ բերէն, իր առաջքը դնեն, ու՝ կեր բսեն (ՀՄ): – Գիշերով ելավ գնաց: Ա՛լ չպիտի գար, Դշխուին տունը գնաց, *հոնկէ պիտի առնեն ու տանին*, - կըսեր մամը հեկեկալով (ՄՆԶ): — Ինչո՞ւ քովս եկար, կուզե՞ս, որ մեկը վրա գա, *քեզ տեսնեն* ու ամենուն բերանը ինկնանք: Մի կենար, գնա, - ըսավ (ՄՆԶ):

¹⁴ Հմմտ. Գարապետյան Լ. Լ., Հովսեփյան Լ. Ս. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 147:

իրենց մոտ եղած դուլարը, (*հավաքվածներից*) ոմանք էլ դուլարն ու ոսկին փոխանակել են թուրքական լիրայով (ՀՏ): Հոս միայն մեզի համավիճակ եղողներուն տեղն է, ծերունի՛, մեզմէ ոմանք դրամի սիրուն ճշմարտութիւնը աղբանոց նետողներն են, [*մեզմէ*] ոմանք՝ խաթեր համար, իրենց անձնական համոզումէն ու անկախութենէն մաշուած անճարակները (Թ):

2. Ստորոգյալը նույնպէս գեղջվում է լրիվ կամ մասնակիորեն:

2.1. Ստորոգյալը լրիվ գեղջվում է՝

2.1.1. Երբ կազմութեամբ պարզ է՝ արտահայտված համադրական ժամանակաձևով: Օրինակներ՝

Գրաբարով՝ Յետ Արշակայ առնու զթագաւորութիւն նորա Արշական ամս երեսուն. ապա [*առնու*] [զթագաւորութիւն նորա] Արշանակ՝ ամս երեսուն եւ մի (ՄԽ):

Միջին հայերենով՝ Աբիմելէք դատեաց զԲարայէլ ամս երեք. եւ զկնի նորա [*դատեաց*] [զԲարայէլ] Թովղա ամս քսան եւ երկու (ՎԱ):

Արևելահայերենով՝ Դու այսուհետև ժողովվես պիտի Նախ՝ ինքդ քո մեջ Եվ ապա՝ [դու] [*ժողովվես պիտի*] քո շուրջ (ՊՍ):

Արևմտահայերենով՝ ո՛չ ինքզինքն ինտոր ուղղելիքը գիտէ և ո՛չ հասնելիք նպատակը [*գիտէ*] (ԱԶ): մայրերը հինա կուզեն՝ իրենց մագերը հինայելու, հարսերը [կուզեն]՝ իրենց ձեռքերը հինայելու (ՄՆԶ): Հա՛յ, ես անոնց սուտ հավատը և ծոմոյիկ լեզուն ... [....] (ԼԾ): Հեղ մ'ալ նայեցա՝ նե՛՛ չպուխ կա, նե՛՛ Միջո [*կա*] (ՀԱՍ): «Ծո, ջորի, ես քու հոր ... [....]», - խոսեցավ վարպետը (ՀԱՍ):

2.1.2. Երբ արտահայտված է ասացական բայի համադրական կամ վերլուծական ժամանակաձևով և ուղղակի խոսքին նախորդող հեղինակի խոսքի կազմում է: Օրինակներ՝

Գրաբարով՝ որ թէպէտ եւ յուրաստ եղեալ Արտաշեսի [*ասէ*], թէ չէ այդպէս՝ ոչ հաւատացին լսողքն (ՂՓ): Վասն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա եւ յանդիմանէր սուրբն Խաղ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, [*ասէին*] թէ ե՛կ ուղղեա սեղան յեկեղեցուջն յաւանն յԱրշակաւան (ՓԲ):

Միջին հայերենով՝ Ես ալ ի դէմիկն ելայ, [*կանչեցի*]. – Ո՞ւր կերթաս, *քո* ժամն է հարամ (Հ): Օրիկ մի չելար, չեկիր, [*չասիր*]. – Ի՞նչ կանես կամ ո՞նց կու լինիս (Հ): Էկան էն դամագ մարդիքն, [*ասին*] Թէ՛ Բե՛ր, զքո ետոն մեզ ցըցու (Հ):

Արևելահայերենով՝ Իմ հերը [*հարցրել է*] թե՛ «ինչի՞, այտա, ես տանձի չի՞ր եմ» (ՀՄ): Բորչալու, Վրաստան, ցորնագողի բկից է բռնել, [*ասել է*], թե՛ «էս է կովս, կովս գտա» (ՀՄ): Նա էլ [*հարցնում է*] թե՛ «նագա՞ն ես հանում» (ՀՄ)¹⁵:

¹⁵ Աբրահամյան Ս. Գ., էջ 215:

Արևմտահայերենով՝ — Միսերը թո՞ւլ էին,- [հարցուց Ազիկ]: — Պինդ, ձիգ... վրան ընկույզ կոտրե,- [պատասխանեց Պեկամու]: [Ազիկ] Տեղը փոխեց, ու ավելի լավ իմանալու համար՝ առաջը եկավ, ծունկ-ծունկի նստավ ու տեղացուց հարցումները. — Մինա՞կ էր, մարդ կա՞ր: — Մինա՞կ... մարդ չկար,- [ըսավ Պեկամու]: — Ուրտե՞ղ էր, ուրտե՞ղ, Պեկամու,- [հարցուց Ազիկ]: — Ուռի Ձոր,- [պատասխանեց Պեկամու]... — Ուռի Ձո՞ր... ինչպե՞ս ալ տեղն է եղեր, ճիշտ ալ տեղը,- [ըսավ Ազիկ] (ՄՆՁ):

2.2. Մասնակիորեն զեղչվում են բաղադրյալ և այն պարզ ստորոգյալները, որոնք ունեն վերլուծական կամ բարդ կազմություն, մասնավորապես՝

2.2.1. Վերլուծական ժամանակաձևով արտահայտված պարզ ստորոգյալների օժանդակ բայերը: Օրինակներ՝

Գրաբարով՝ Մերուժանն Արծրունի վաղուց եւս օրէնս Մագդեգանացն յանձն առեալ էր, եւ ուրացեալ [էր] զհաւատսն քրիստոնէութեան հաւատոց (ՓԲ):

Միջին հայերենով՝ Գլխակս ի վայր եմ դրեր, Այն անուշ քունըն [է] զիս տարեր (Հ): Քանի ես մօրէս ծել [եմ]՝ Նա փատէ խամագ չեմ տեսեր (Հ):

Արևելահայերենով՝ Մեկ օր խմում [ենք] և երկու օր արդեն խումար ենք ընկնում, Մեկ ժամ քայլում [ենք] և երկու ժամ խոսում [ենք] դրա օգուտից Կամ վնասից (ՊՍ): Շշմած մարդն սթափվում էր, հավաքում [էր] այն, ինչ հանձնում էին՝ ձիու սանձը, չվանները, համետը (ԱԲ):

Արևմտահայերենով՝ ու այն պզտիկ, մուրացիկ մանչը գուցէ ողջ է ու հասակ նետած [է] (ՎՇ): Երկու օր իս Դպրենց հարսը, մեկ ալ՝ մերերոնց հարսը եկեր [են], ծծցուցեր են (ՄՆՁ): Ուզեցի անպատճառ զինքըն անձամբ ճանչնալ, իր ձեռքը սեղմած, իր հետը խոսած ըլլալ (ԱՁ):

2.2.2. Վերլուծական պատճառական բայերով արտահայտված պարզ ստորոգյալի *տալ* բաղադրիչը: Ահա մեկական օրինակ գրական հայերենի երեք շրջաններից՝ եւ ոչ տամ համբուրել քրիստոնէից զկապանս նորա, եւ ոչ [տամ] երկիր պագանել ոսկերաց (ՂՓ): եւ ետ բերել նալ ծանրագին եւ բարձրահասակ ի Խլաթայ, եւ [ետ] դնել ի վերայ գմբեթի կաթուղիկէին (ՎԱ): Մայրն այդ բանաստեղծությունը նախ կարդալ տվեց, հետո՝ արտագրել [տվեց]//Մայրն այդ բանաստեղծությունը նախ կարդալ [տվեց], հետո՝ արտագրել տվեց:

2.2.3. Միջին հայերենի սահմանական, ենթադրական և հարկադրական եղանակներով արտահայտված ստորոգյալների *պիտի* (*տի*)¹⁶, հազվադեպ՝ *կ* (*կը*//*կու*) եղանակիչները՝ Բայց տեսնուլ պիտի եւ փնտոել [պիտի] եւ իմանալ

¹⁶ Բացառիկ դեպքերում հանդիպում է նաև *պի* զեղչված ձևով՝ Եւ ծննդեան կրկին այլ *պի* բերե եւ տայ ի ձեռն տանուտրացն անպատճառ (Կ-Պ):

[*պիտի*] զմտնելոյն, որպէսն ի վարձն ու ի ամէն կերպ (ՄՄԴ): Մէյ մ՝ ալ տուշմանս ուր տեսնիմ, Տի հանիմ չախուէկս ի ճեպէս, *Չախուէկս ի ճեպէս* [*տի*] *հանիմ*, Տի մորթիմ սն ոշխրրի պէս (Հ): Կանանչ ու մօռ կու հագնիս, [*կու*] *Գաս*, ի յիմ դիմացըս [*կու*] *կանգնիս* (Հ): Թէ չէ կսպանէ գքեգ, Արիւնով ձեռովին [*կու*] լուանայ (Հ): Յորժամ աղէկ կին տեսնում, Կու նայիմ և խիստ [*կու*] *ցանկանամ* (Հ): – Ո՛չ կաննեմ ծոցիկս ի քուն, Ո՛չ տէստուր [*կու*] *տամ՝* երթասս ի տուն (Հ):

2.2.4. Արևելահայերենի և արևմտահայերենի *պիտի//պիտ//պետք է//պետք էր* եղանակիչները՝ Պանինի շները պիտի հարձակվելին նրա վրա, [*պիտի*] *հալածեին* (ԱԲ): Նա հետո պիտի դառնա պատանի, Ե՛վ երիտասարդ [*պիտի* դառնա], և՛ այր իմաստուն [*պիտի* դառնա], Անբախտ Մարոյին լացով [*պիտի*] *սպանի*, Մեր հառաչանքը [*պիտի*] *հասցընի* Աստծուն (ՊՍ): Կարծես [գիշերը] պիտի գար վրանիս ու [*պիտի*] տապալէր մեզ (ՎՇ): Կարծենար ամենուն, որ իր հարսիկն ալ ուխտ պիտի տաներ զինքը: Իրեն նոր տրեխներ պիտի կարեր ու [*պիտի*] հագցներ իրենց (ՄՆՁ): Ան ատեն խորհեցա, որ պետք էր օգնության հասնիլ մեր տարաբախտ ընկերոջ և [*պետք էր*] թույլ չտալ, որ ծեծի ու նախատինքի ենթարկվի (ԵՕ): Բայց չպետք է հուսահատիլ, այլ [*պետք է*] սպասել հոգեբանական բուժելին (ԵՕ):

2.2.5. Պարզ ստորոգյալների կազմում հանդես եկող *թող, եկ//եկուր, բեր* և նմանօրինակ եղանակավորիչները: Օրինակներ՝

Գրաբարից՝ թող ծառայեսցուք թագաւորին Յունաց, [թող] կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց (ՓԲ): Թող ինքն նախ երթայր և [թող] առնոյր զթագաւորութիւնն (ԵԿ):

Միջին հայերենից՝ Ով որ սպիտակ ծոց ունի, Թող ապրի, [թող] շապիկ հագանի (Հ): Թող մուկն իր կարասն ընկնի, [թող] Կատուն զիր ձկնակն աւիրէ (Հ):

Արևելահայերենից՝ Թող դուք կորչեիք հորթերի տեղակ, [թող] Մի արջ պատահեր, մի գազան, մի գել (ՀԹ): Թող երգեն առաջվա պէս և [թող] ստեղծագործեն, [թող] նոր շենքեր կերտեն (ԱԲ):

Արևմտահայերենից՝ «Ասոնք տանիմ, Ավագանին ձորը պտտցնեմ, թող վազեն, [թող] խաղան, [թող] ձայներնին կտրեն» կխորհի (ՄՆՁ): «Աման, թող մայրը աղեկնա, [թող] ոտքի ելլէ, [թող] տղան ալ մեռնի նը՝ ի՞նչ ընենք. առջինեկ է, թող մայրը նորեն ուրիշ մը բերէ» ըսեր են ամենքը (ՄՆՁ): — Հայտի, բան մը պիտի չընեմ քեզի, եկուր Բարիկանց ածուքը մտնենք, [եկուր] անոնց մեծ փշատի ծառին տակը նստինք, [եկուր] քիչ մը խոսինք (ՄՆՁ):

2.2.6. Բայական և անվանական բաղադրյալ ստորոգյալների հանգույցները¹⁷: Օրինակներ՝

Գրաբարով՝ [Արտաւագո] Ջանայ ելանել եւ [ջանայ] առնել վախճան աշխարհի (ՄԽ): եւ տուեալ գոսկին՝ կամի խնդրել գունդ եւ [կամի] ապստամբել» (ՂՓ): Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց [էր] (ՓԲ):

Միջին հայերենով՝ Ասէ առիծն *ընդ աղուէսն*. Եթէ կարես էշ մի գտանել եւ [կարես] բերել (ՎԱԱ): Ու կարաւոյ է թագաւորն յիր առողջութեան եւ ի մահուն կտակ գրել, ու [կարաւոյ է] սահմանել եւ [կարաւոյ է] տալ զլեռն եւ զդաշտն եւ զիր ամէն երկիրն զինչ ցեղ որ իր կամքն լինի (ՄՄԴ): Եա քաղցրը նոան գինի [լինէի], Ջոր գրո շիշատ պիտէի (Հ): քրիստոնեայքն աղաղակեցին. «Մէք Քրիստոսի ծառայք ենք եւ հաւատացեալք [ենք]» (ԹՄ): Ես՝ աչք [եմ] ու դուն՝ լուս [ես], հոգի՛, Առանց լուս՝ աչքն խաւարի (Հ):

Արևելահայերենով՝ Սակայն հո չէ՞մ կարող ես մի եզի նման Անգիտաբար լիզել իմ կողերին քսած Ամեն կավիճ ու ցեխ, - կամ [հո] [չէ՞մ կարող] Անմտորեն փնչալ հին թելերից հյուսված Երեսն ի վայր կախված չոր ծոպերի փնջին (ԵՉ): Երկրորդ՝ եկեղեցու շրջապատի օդը ավելի մաքուր և առողջարար կլինի, տեսարանը՝ դյուխական [կլինի] (Մ):

Արևմտահայերենով՝ [Թորոս] Չկրցավ մոտենալ, [չկրցավ] բերանը բանալ, [չկրցավ] խոսք մը ըսել (ՄՆՁ): կը փորձէր հարձակիլ կնոջական էմանցիբացիայի առաքյալին վրա և [կը փորձէր] լռեցնել նորա ճշմարտախոսության շեփորը (ԵՕ): պատճառը այդ դժվարին ու քիչ մըն ալ ձանձրալի աշխատության փոխարեն սպասված նվերն է, և հետո՝ անձնասիրության այն փաղաքշումը [է], գոր կունենա [փոքրիկ անատակը] (ԱՉ): Ավա՛դ, կասկած չկա, որ չեմ կրնար գործս ձգել ու վերստին մատնվիլ այն լլկիչ տանջանքին (ԱՄ):

Հատկանշական է, որ բաղադրյալ և վերլուծական կազմությամբ պարզ ստորոգյալների, համապատասխանաբար, հանգույցը և օժանդակ բայը կարող են զեղչվել ոչ միայն նախապես հիշատակված լինելուց հետո, ինչը սովորական է, և այս դեպքում թերի ստորոգյալին նախորդում է լրիվը, այլև նախապես հիշատակված լինելուց առաջ, որի դեպքում թերի ստորոգյալին հաջորդում է լրիվ կազմությամբ ստորոգյալ: Օրինակներ՝

¹⁷ Մասնակիորեն կարող է զեղչվել նաև բայական միադիմի միակազմ նախադասության գերադասանդամը: Օրինակ գրաբարից՝ «Մի՛ լիցի ինձ ստել Արարչին իմում՝ պատճառանօք եւ կամ ճշմարտութեամբ, եւ մի՛ [լիցի] [ինձ] ուրանալ զայն առաջի անօրէն եւ մահկանացու ազգի» (ՂՓ):

Արևելահայերենից՝ Ես քու *հոքիրն [եմ]* ... ես քու *նանն եմ* ... Ես էլ ազիզ *բարեկամ [եմ]* ... (ՀԹ): Մեկ օր խմում [ենք] և երկու օր արդեն խումար ենք ընկնում (ՊՍ):

Արևմտահայերենից՝ Մենք ալ կիսամերկ *[էինք]* ու անսուաղ էինք: և բոլո՛րս ալ, որք էինք ու պանդուխտ *[էինք]* (ՎՇ): Փետտեր էր կորիճնաներուն կապույտ ու մանիշակ կոճակները, դերձանի վրա շարեր *[էր]* (ՄՆԶ): Միսեռնե՛րուն ալ կանաչ փեճիկները բացեր *[էր]*՝ թարթիչներուն բռնել տվեր էր (ՄՆԶ):

3. Լրիվ կամ մասնակիորեն կարող են գեղջվել նաև պարզ և բարդ նախադասությունների, համապատասխանաբար, պարզ և բաղադրյալ երկրորդական, այլև հարակից անդամները:

3.1. Լրիվ կարող են գեղջվել՝

3.1.1. նախադասության տարբեր անդամներ, որոնց թվում ամենահաճախադեպը թերևս երկխոսությունների անքակտելի մաս կազմող հեղինակի խոսքի հանգման (հաղորդման) խնդիրն է: Օրինակներ՝

Գրաբարով՝առաւել եւս գրգռեալ զթագաւորն եւ զամենայն աւագանին ասելով *[ցնուսա]*. «Եթէ ոչ ուստեք ունէին նոքա յայլուստ օգնականութեան յոյս» (ՂՓ): Եւ գթացեալ Արտաշիսի՝ հրամայեաց ածել *[գնա]*. եւ հարցեալ *[ցնա]* եւ ուսեալ, թէ զի՛նչ է որ աղաղակեացն՝ հրամայեաց ներել *[նմա]* զտանջանսն» (ՄԽ) և այլն:

Միջին հայերենով՝ Ասեն կանայք *[ցնա]*. «Դու կոչեա զառաջնորդքն մեր, եւ *[մեք]* դէմ յանդիման վկայեմք նոցա» (ԹՄ): Նա դառն ոգով ասաց *[ցնուսա]*. «Ո՛վ որդիք, [դուք] լուարուք ինձ. վայ եւ եղուկ է ամենայն մարդկան (ՎԱ): Այնչափ սուման հասոյց Յովանէսն եւ վճարեց [Յովանէսն] *[այնչափ]* *[սուման]* լման ինձի (Կ-Պ): Կու գան ու կու տան [ինձ] հազար, Չե՛մ առնուր ու քեզ չե՛մ ի տար [նոցա] (Հ): Զգինդս յականջէս հանին, Զմատանին *[ի մատնէս]* *[հանին]* (Հ):

Արևելահայերենով՝ - Իսկ եթե ուրախ լուր չբերե՞՞հարցրեց թագուհին [Գոհար իշխանուհուն] (Մ): Սարսափած աչքերով կինը նայեց շուրջը. [կնոջ] աչքերը սև էին, սև [էին] ու ջինջ [էին] (ԵԶ): Որբացած հոգիս ողջունում է քեզ ... [որբացած հոգիս] Դյութական ձայնով *[քեզ]* կանչում է հանդես (ՀԹ): Շատ սպասելով, զուր սպասելով հարմար պաշտոնի, Ես ինքս եմ ահա ինձ նշանակում *Լուսավորության նախարար*՝ ասեմ, *Թե՞՞ կատարածու լուսավորության, Այսինքն՝ լույսի, լապտերի, ջահի* *[նախարար կամ կատարածու]* (ՊՍ):

Արևմտահայերենով՝ - Մենակ կարո՞ղ էք ճանապարհը գտնել,- հարցուց [ինձի օրիորդ Շահամիրեան] (ՎՇ): Աղաները, տեսնելով, որ Վարդանն ալ կղեգերի իրենց շուրջը, գոհ եղան ու ըսին. [անոր] — Աֆերիմ Վարդան, աղեկ խելք ըրեր ես ու եկեր ես (ՄՆԶ): Մեր թելլալը Հաճի Տյուրիկն է, - Մերն ալ *[Հաճի Տյու-*

րիկն է] (ԳԶ): Տեսեր էր՝ արյունոտ աչքերով մարդիկ, որ իր հորը վրա հարձակվեր [էհն], [արյունոտ աչքերով մարդիկ] բիրի հարվածներով զայն զգեսներ [էհն], [արյունոտ աչքերով մարդիկ] անոր գլուխը կտրեր [էհն] ու [արյունոտ աչքերով մարդիկ] գնդակի պես իրարու նետեր [էհն] ու հետո [արյունոտ աչքերով մարդիկ] ուրախության աղաղակներով մեկներ էին (ԱԶ):

- Կուգա... հո՞գո է որ,- պատասխանեց կեսուրը,- [դուն անոր] ցա՞վն ես քաշեր, [դուն անոր] մա՞յրն ես, որ սիրտդ ցավի, [դուն] օտար աղջիկ չե՞ս (ՄՆԶ):

3.1.2. նախադասության հարակից և օժանդակ անդամները՝ շաղկապներ, հարաբերյալներ ու հարաբերականներ և այլն: Օրինակներ՝

Գրաբարով՝ Արդ հաստատ գիտեմ [զի] գոր լուայն թէ ստոյգ է (ՓԲ): Գիտեա [և] տես [թէ] զիա՞րդ ապրեցուցես զանձն քո եւ զմեզ (ՓԲ): Արդ՝ ծանիցեն զքեզ [թէ]՝ յորոց վերայ մեռար դու (ԱԳ): Զորս իմանային օգնականս [այնպէս]՝ որգովն ի հարագատս յուսացեալ եղբարս (ՆՀԲ):

Միջին հայերենով՝ Գիտեմ, [զի] շատ հայրեն գիտես (Հ): Չեմ գիտեր՝ [թէ] ո՞րն է սիրելու (Հ): Որչաք ի մսէն ջուր ելանէ, [այնչաք] դուն հետէն ա՛ն զջուրն (ՄՀ): Այնչափ ողորմիկ կու լամ՝ [որ] Աչերուս արիւն կու կաթէ (Հ):

Արևելահայերենով՝ Թոա՛ն, [որպեսզի] շուտով գտնեն բերեն անշեջ հուրը աղջկան (ՀԹ): Չգիտեմ, [թէ] որտեղի՞ց է գալիս ջութակի հեկեկանքը տրտում (ՎՏ): Կյորեսը մեռնում էր [այնպէս], ինչպէս մեռնում է Խուռուփի ձորի վերջին կաղնին (ԱԲ):

Արևմտահայերենով՝ Նայինք՝ [թէ] ինչեր գրված կան (ՊԴ): ես՝ որ ամենէն մտերիմ ընկերներուս իսկ դժուարութեամբ ցոյց կու տայի գրածներս, չեմ գիտեր [թէ] ի՞նչպէս զինաթափ եղած էի իր աղուոր նայուածքին տակ (ՎՇ): ջաղացպանը՝ Պապոն, երկանաքարերը քանի ատեն է՝ [որ] չէր կռանած (ՄՆԶ): Գիտե՞ս [որ] գիշէ՛րը կուլամ, Մոմիս դիմաց մինակուկ (ԱԶ): Տեսնելու են [այն] ինչ որ կա իրերուն ներսդին և ինչ որ հորիզոնին ետև կթաքչի (ԱԶ):

3.2. Մասնակիորեն կարող են գեղջվել կազմությամբ բաղադրյալ և կապական կապակցությամբ արտահայտված երկրորդական անդամները: Օրինակներ՝

Գրաբարով՝ ապստամբեալ ասեն ի Մակեդոնացուց եւ թագաւորեալ ի վերայ ամենայն արեւելից եւ ի վերայ՝ Ասորեստանեայց (ՄԽ):

Միջին հայերենով՝ Յաղագս երկնի և [յաղագս] զարդուց նորա (ՆՇ): Վասն ստածման եւ [վասն] բժշկութեան առաջին ցեղ հալեմաշ ջերմանն (ՄՀ):

Արևելահայերենով՝ «Մի մարդ երեք ընկեր ուներ: Նրանցից երկուսին շատ էր սիրում, իսկ [նրանցից] երրորդին քիչ տեղ էր տալիս» (ՀՏ): Առանց հավատի կյանքում դյուրին չէ նույնիսկ մեռնելը, Իսկ [առանց հավատի] ապրելն ... արդեն անկարելի է (ՊՍ):

Արևմտահայերենով՝ խորտակված հույսերու [մեջեն], փլած հավատքներու մեջեն աշխարհն ինձի կերևար ինչպես Ճակատագրին մեկ կոպիտ սխալը (ԱՉ): այնքա՛ն տարանման իրադարձությանց մեջեն անցնելե [հետն], է՛ն մաքուր փառքերն ու է՛ն սոսկալի փորձանքներն ճանչնալե հետո, դուն կհոսիս միշտ, ո՛վ Լեզու Հայկական (ԱՉ): նկատեց ծերուկ Լորը, առանց գլուխը վերցնելու ու [անանց] աչքերը բանալու (ՄՆՉ): Թարապուլուսի փայլփլուն գոտի կուզեն հարսները, սև թավիշ՝ բարձր կոնաձև գլխարկներ շինելու համար, արծաթ ու պղինձ զարդադրամ՝ գլխարկներուն ճակատը քունքքունք կարելու [համար], ապրշում, արծաթ ու ոսկեգույն սրմա՝ գրպաններն ու էնթարիները երիզելու [համար], դեղին ու կարմիր մորթե կանացի չետուկ, կարկեհանի ու սուտակի գույն վարտիքցու, սնդուս ու թավիշ՝ իրենց մեջքերեն մինչև կրունկները իջնող ակնահմա վարտիքներուն համար (ՄՆՉ):

4. Միջին հայերենի նյութական և ոչ նյութական իմաստ արտահայտող մի շարք բառերում ու բառաձևերում զեղչվում են նաև որոշ հնչյուններ¹⁸, որով մասամբ հետապնդում է բանաստեղծական տողաչափերը կարգաբերելու, մասամբ էլ՝ կից ձայնավորների արտասանական անբարեհնչունությունը կանխելու նպատակ¹⁹: Այստեղ զեղչվում են՝

4.1. Ձայնավորով վերջացող և ձայնավորով սկսվող բառերի միջև գործածված *ni* և *ez* շաղկապների, համապատասխանաբար, *n* և *e* ձայնավոր հնչյունները²⁰՝ Մանուկն է շահին բազա, Կու թռչի ՚ի [ez] այլ երամ խառնի (Հ): Ով զքեզ յիսնէ բաժնեց՝ Քօստի ՚ի [ez] ի ոսկերքըն՝ ցեց (Հ):

4.2. Ձայնավորով սկսվող բառերին նախորդող *թէ*, *նա* շաղկապների, *մի/մը* անորոշ դերանվան, *տի* եղանակիչի ձայնավորները. Ն՛ [նա] ալվայ երեսիս ջրբէն Կու վախեմ, թէ մարդ իմանայ (Հ): Ով կերթայ ն՛ [նա] աժան կու տայ, Ես կերթամ՝ ի սուղ կու ծախե (Հ): Վարի վարճինակ մ՛ [մի/մը] եկաւ, Ջորսն առաւ այն երկու քաջին (Հ): Հաշուենք թ՛ [թէ] անպըտուղ փայտ ես՝ Կըրակին լինիս վառելիք (Հ): Յայն գաղտ դուռն ի դուրս ելայ, Լուկ գտայ հատիկ մ՛ [մի/մը] ալ ոսկի (Հ): Արունը գինի *տ՛* անիմ, Տի իմիմ անպակ գինու պէս, Մսիկն ալ քեպապ տ՛ անիմ, Տի ուտիմ կաքու մսի պէս (Հ):

¹⁸ Տեղի է ունենում ձայնավորից կամ ձայնավորից ու բաղաձայն(ներ)ից կազմված վանկի անկում կամ սղում:

¹⁹ Կից ձայնավորների գործածությունը հայերենի բառակազմական յուրահատկություններից չէ՝ սկսած դեռևս գրական հայերենի առաջին շրջանից: Պատահական չէ, որ կից ձայնավորների միջև թույլ կամ ուժեղ հնչում է *j* ձայնակապը:

²⁰ Հմմտ. Ղազարյան Ս.Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 273:

4.3. *Գալ, գիտել, եւ, մորթել, սիրել, ունել* և այլ բայերի անցյալ անկատարի (/կու/ գայի, գիտէի, ունէի, էի, /կու/ սիրէի և այլն) խոնարհված ձևերի խոնարհիչ ձայնավորները (*ե/է, ա*), յ ձայնակապը և/կամ *ի* դիմաթվային վերջավորությունը և այլն: Օրինակ՝ Յանկարծ ցան գիս էառ, Թուլցաւ բնութիւնն, որ ուն'ի [*ունէի*] (Հ): Այնչափ քնքուշ չէ'նք [*չէինք*] տեսեր, Երբ տեսայ՝ նա ուշքս գնաց (Հ): Մահալօքդ ի վար կու գի [*գայի*], Լօք տեսա չոր գանգ մի ձրգած (Հ): Երթ'իր [*երթայիր*], իմ եարին *աս'իր* [*ասէիր*], Խոռով է, հաշտեր հետ ի յիս (Հ): Աստուած է վերն ի վկայ, Որ զքեզ մէկ սրտով կու սիր'ի [*սիրէի*] (Հ): Երբոր չէ'ր [*չէիր*] սիրեր դու զիս՝ է'ր կու գայիր լեզուվդ ի խրատ (Հ): Դու զիշուն միսն ի ներս լից եւ շակէ եւ *արեկ* [*արի եկ*] գետեզերովն անցիր (ԱՅԳ): Դաւիթ մարգար [*էի*] որդին Սոդոմոն՝ զա՛յս մեզ կու ասէ (Հ):

5. Հնչյունների զեղչում է կատարվում նաև արևելահայերենում ու արևմտահայերենում, ինչն, ըստ էության, միջին հայերենից, ապա և բարբառներից ժառանգված լեզվական իրողություն է: Արևմտահայերենում, օրինակ, ձայնավորով սկսվող բառերից առաջ զեղչվում են ձայնավորով վերջացող *ւր* անորոշության ցուցիչի, արգելական հրամայականի *մի՛* օժանդակ բառի, *թէ* ստորադասական շաղկապի ձայնավոր հնչյունները և այլն, ինչպես՝ Այտերուն վրա ժպիտ *մ'ւր* [անուշ փթթեցավ (ԱԶ): - Մ' [*մի*] անիծեր Սառիկ, ճահիլություն է (ՀԱՄ): - «Ձեռքդ երկարե, *'սավ* [*ըսավ*] Տրդատ»: - «Դու գիրկդ բաց, կը ցատկեմ» (ԴՎ): ... քեզի պան մը *պիտոր* [*պիտի որ*] ըսեմ (ՀԱՄ) և այլն:

Եզրահանգում. Գրական հայերենի երեք փուլերում՝

1. Զեղչումը լայն տարածում ունի: Այն բնորոշ է եղել բանավոր խոսքին, որտեղից էլ անցել է գրավորին և հետապնդում է տարատեսակ (ժամանակ, ջանք, նյութ և այլն) տնտեսումների, ինչպես նաև խոսքի ոճավորման նպատակ: Զեղչումը առանձնապես հաճախադեպ է նոր գրական հայերենի երկու ճյուղերի՝ ուղղակիորեն մեջբերվող գրավոր խոսքերում:

2. Զեղչվում են թե՛ ամբողջական նախադասություններ, թե՛ նախադասությունների առանձին հատվածներ, թե՛ գլխավոր ու երկրորդական անդամներ կամ վերջիններիս բաղադրիչներ և թե՛ հարակից անդամներ, անգամ՝ հնչյուններ: Վերոնշյալ իմաստակիր միավորները շարահյուսական միևնույն կամ տարբեր գործառույթներով բառային արտահայտություն ունեն նույն, նախորդ կամ հաջորդ որևէ նախադասության մեջ, իսկ եթե անգամ բառային արտահայտություն չունեն, ապա խոսքային տվյալ իրադրության մեջ ենթադրվում են: Նշանակում է՝ զեղչման ամենակարևոր նախապայմանը խոսքի բովանդակային պլանն անխաթար պահելն է: Նախադասությունների, նախադասության անդամների ու հարակից միավորների կազմում կարող է կատարվել՝ ա) լրիվ կամ բ) մասնակի զեղչում: Զեղչման հետևանքով ձևավորվում է կառուցվածքով թերի, սակայն

բովանդակությամբ լրիվ շարահյուսական միավոր, որը և նրա՝ կառուցվածքով լրիվ տարբերակը շարահյուսական համանիշներ են: Թերի նախադասությունները լինում են՝ ա) անկախ կամ բ) կախյալ:

3. Ջեղչված միավորը ուղղակի կամ խորքային կապով առնչվում է խոսքի կա՛մ նախորդ հատվածում, ինչը սովորական է, կա՛մ հաջորդում տեղ գտած լեզվական որևէ միավորի հետ: Քերականորեն արտահայտված և զեղչված միավորները կա՛մ նույնական են, կա՛մ ոչ նույնական:

Միջին հայերենի նյութական և ոչ նյութական իմաստ արտահայտող մի շարք բառերում ու բառաձևերում զեղչվում են նաև որոշ հնչյուններ, որով հետապնդվում է մասամբ բանաստեղծական տողաչափերը կարգաբերելու, մասամբ էլ երկու կից ձայնավորների արտասանական անբարեհնչունությունը կանխելու նպատակ, ինչը որդեգրել են ժամանակակից արևելահայերենն ու արևմտահայերենը:

Հ ա մ առ ո տ ա գ ր ու թ յ ու ն ն ք

ԱԱ – Ամիրդովլաթ Ամասիացի

ԱԲ – Ակսել Բակունց

ԱԳ – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց

ԱՅԳ – Վարդան Այգեկցի

ԱԶ – Արշակ Չոպանյան

ԱՍ – Արամայիս Սրապյան

Ա.Ս – Ա. Սեմա

ԳԶ – Գրիգոր Զոհրապ

Դ – Դև (Մարգար Ղարաբեգյան)

ԴՎ – Դանիել Վարուժան

ԵԿ – Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց

ԵՂ – Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին

ԵԶ – Եղիշե Չարենց

ԵՕ – Երվանդ Օտյան

Թ – Յարութիւն Թլկատինցի

ԹՄ – Թովմա Մեծոփեցի

ԼՇ – Լևոն Շանթ

Կ-Պ – Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)՝ աշխատասիրությամբ Վ.Ռ.Գրիգորյանի, Երևան, 1963

Հ – Ա.Մնացականյան, Հայրեններ, Երևան, 1995

ՀԱՄ – Համաստեղ

ՀԹ – Հովհաննես Թումանյան

ՀՄ – Հրանտ Մաթևոսյան
ՀՏ – համացանցային տեղեկատվություն
ՂՓ – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան
Մ – Մուրացան
ՄԽ – Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց
ՄՀ – Մխիթար Հերացի
ՄՄ – Միսաք Մեծարենց
ՄՆՁ – Հակոբ Մնձուրի
ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի
ՆՇ – Ներսէս Շնորհալի
ՇՇ – Շահան Շահնուր
ՊԴ – Պետրոս Դուրյան
ՊՍ – Պարույր Սևակ
Ս – Սիամանթոն
ՍԳ – Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր կտակարանաց
ՍՄԴ – Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք
ՎԱ – Վարդանայ վարդապետի Հաւաքումն պատմութեան
ՎԱԱ – Վարդան Այգեկցի, Առակք
ՎՇ – Վազգէն Շուշանեան
ՎՏ – Վահան Տերյան
ՏՁ – Տիրան Չրաքյան
ՓԲ – Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց

ЭЛЛИПСИС В ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ НА ТРЕХ ЭТАПАХ ЕГО РАЗВИТИЯ

Хачатрян Г. К.

Ключевые слова: *эллипсис, член предложения, примыкающий член предложения, тождественный и нетождественный, полный эллипсис, частичный эллипсис, древнеармянский язык, среднеармянский язык, восточноармянский язык, западноармянский язык.*

На трех этапах развития литературного армянского языка наблюдается следующая картина:

1. Эллипсис имеет широкое распространение. Он преследует различные цели: вариативную экономию (время, энергетика, материал и т.д.), а также речевую стилизацию. Эллипсис особенно часто встречается в двух ветвях современного литературного армянского языка в непосредственно цитируемой письменной речи.

2. Эллиптические единицы (предложения, отдельные фрагменты предложения, главные и второстепенные члены или их компоненты, смежные члены, даже

звук) в идентичных или разных синтаксических функциях имеют лексическое выражение в предшествующем, последующем или в том же самом предложении, а если не имеют лексического выражения, то оно предполагается в данной речевой ситуации. Благодаря эллипсису образуется неполная по структуре, однако, полная по содержанию синтаксическая единица. Неполное по составу предложение и его полный вариант - синтаксические синонимы. Неполные предложения могут быть: а) зависимыми или б) независимыми.

3. Связь между грамматически выраженными и эллиптическими членами может быть тождественной и нетождественной. В составе предложений, членов предложений и смежных единиц может наблюдаться: а) полный эллипсис или б) частичный эллипсис.

В целом ряде слов и словоформ среднеармянского языка, выражающих материальное или нематериальное значение, эллипсису подвергаются также некоторые звуки, что связано, с одной стороны, с версификацией стихотворной метрики, а с другой – с устранением артикуляционного неблагозвучия двух смежных гласных, что в какой-то степени унаследовали литературный восточноармянский язык и западноармянский язык.

ELLIPSIS IN THE THREE STAGES OF DEVELOPMENT OF LITERARY ARMENIAN

Khachatryan G. K.

Key Words: *ellipsis, members of sentences, sentence adjacent member, identical and non-identical, complete ellipsis, partial ellipsis, Old Armenian, Middle Armenian, Eastern Armenian, Western Armenian.*

Ellipsis has the following characteristics in Literary Armenian:

1. Ellipsis has a wide-spread use in the three stages of development of literary Armenian. Being characteristic of oral speech and further penetrating into written speech, ellipsis is a means of enhancing the Economy Principle (time, energy, material, etc.) and the stylistic colouring of speech. Ellipsis is a frequent occurrence primarily for the two branches of literary Armenian, more specifically for explicitly stated written utterances.

2. Ellipsis can be used to reduce complete sentences and sentence fragments on the one hand, and primary and subordinate clauses, their constituent or adjacent parts or even sounds on the other hand. The above mentioned units have their semantic manifestations with similar or different syntactic properties in the same, preceding or following sentences but if they don't have their lexical antecedents, they are implicated in a certain situational context. This means that the most important precondition for ellipsis is the maintenance of the semantic representation of the utterance. In terms of complete and partial ellipsis, omissions can occur in sentence structures, members of sentences and in adjacent language units. Ellipsis results in getting structurally incomplete yet semantically complete syntactic units which together with their semantically complete counterparts form syntactic

synonyms. Elliptical sentences can be dependent and independent.

3. The ellipited member is explicitly or implicitly related to some language unit(s) used either in the preceeding or following parts of the utterance, the former being more common. Grammatically overtly expressed and ellipited members are either identical or non-identical.

In Middle Armenian, some sounds were ellipited in a considerable number of words and word forms denoting material and abstract meanings which aim at partially regulating poetic rhythm and, to some extent, preventing the articulation dissonance of two adjacent vowels. This has been adopted in Modern Eastern Armenian and in Western Armenian.

References

1. **Abrahamyan S. G.** Hayoc lezu, Sharahyusutyun, Yerevan, “Luys” hrat., 2004 (**In Armenian**),
2. **Abrahamyan S. G., Parnasyan N. A., Ohanyan H. A., Badikyan Kh. G.** Zhamanakakits hayoc lezu, h. 3, Sharahyusutyun, Ye., HSSH GA hrat., 1976 (**In Armenian**),
3. **Ghazaryan S. Gh.** Hayots lezvi hamarot patmutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1981 (**In Armenian**),
4. **Gyulbudaghyan S.V.** Zhamanakakits hayoc lezu, Parz nakhadasutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1988 (**In Armenian**),
5. **Iskhanyan R. A.** Ardi hayereni sharahyusutyun, Parz nakhadasutyun, Yerevan, Yerevani hamalsarani hrat. (**In Armenian**),
6. **Karapetyan L. L., Hovsepyan L. S., Vardapetyan P. K.** Aknarkner migin grakan hayereni patmutyan, h. B, Yerevan, HSSH GA hrat., 1974 (**In Armenian**),
7. **Khachatryan G. K., Shahverdyan T. S., Petrosyan L. H.** Grakan hayereni patmutyan dasentats, h. B, Sharahyusutyun, Ye., “Arman Asmangulyan” hrat., 2018, (**In Armenian**).

Ընդունվել է՝ 13. 06. 2020

Գրախոսվել է՝ 10. 07. 2020

Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի
հայոց լեզվի և հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր,
Էլ. հասցե՝ gxachatryan@yahoo.com